

Նաթելա Մելիքիձե

Սխալքալաքիի լեզվի տան ուսուցիչ

ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՎԱԽՔՈՒՄ

Երկլեզու կրթությունը ժամանակակից հասարակության պահանջն է: Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը բազմալեզու կրթության տեսանկյունից նշանակալի միջոցառումներ է իրականացնում և կոչված է կրթական համակարգը դարձնել ազգային փոքրամասնությունների՝ հասարակությանն ինտեգրման կարևորագույն գործիքը, նպաստել աշակերտների մեջ երկլեզվության կամ երկու լեզվի (ինչպես պետական, այնպես էլ մայրենի լեզվի) տիրապետման կարողության զարգացմանը, բարյացակամ տրամադրվածության ձևավորմանը տարբեր լեզվաբանական թե մշակութային խմբերի նկատմամբ:

Երկլեզու կրթության աջակցության նպատակով 2010 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին Եվրամիության ֆինանսավորմամբ Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոնի» հետ մեկտեղ

անցկացրեց վարժանքներ Ջավախքի դպրոցների տնօրենների համար, որոնք վարում էին հատուկ այս նախագծի համար պատրաստված մենտորներ և խորհրդատուներ:

Վարժանքը նախատեսում էր երկլեզու կրթության էության պարզաբանում, երկլեզու կրթության ծրագրերի մոդելների ծանոթացում, ծրագրի պլանավորման ժամանակ տարբեր գործոնների (աշակերտներ, ընտանիք, դպրոց, հասարակություն) նախատեսում, հայտաձևերի լրացում, լեզվի և երկլեզու դասերի համեմատություն, ինտերմշակութային կրթության հարցեր:

Վարժանքների մասնակիցները խոսեցին իրենց լեզվական կենսագրության մասին (երբ ո՞ր լեզուն են սովորել), դասեցին, թե ի՞նչ իրավիճակում է ավելի հեշտ լեզու սովորել և ինչո՞ւ: Լրացրին թեստ՝ «Ինչպե՞ս եք կարողանում յուրացնել լեզուն»: Այս ամեն ինչը օգնեց նրանց ասել, որ բնական միջավայրում, առանց հարկադրանքի ավելի հեշտ է տիրապետել լեզվին, որ պետական

լեզվի չիմացությունը խոչընդոտում է ինտեգրմանը և անհատական իրացմանը, որ պետական լեզվի տիրապետումը սահմանում է հասարակության բնեռացումը:

Երկլեզու կրթության հետ կապված առասպելներին ծանոթացման ժամանակ (Երկլեզու կրթություն, Մեդանի գիրք ուսուցիչների համար: 2001) համաձայնեցին, որ երկլեզվության քննարկումը դրական համատեքստում ենթադրում է երկլեզվայինների լեզվական և կոգնիտային կարողությունների առավելություն միալեզու մարդկանց համեմատ:

Վարժանքն ունկնդիրներին ցույց տվեց, որ ի տարբերություն մայրենի լեզվի, վրացերենը, որպես երկրորդ լեզու և վրացերենը, որպես օտար լեզու, զարգանում է ուսումնական միջավայրում և ոչ թե բնական միջավայրում, այդ պատճառով որպես «վրացական միջավայրի» ստեղծման ուղիներ անվանվել են՝ դպրոցի վրացերենի և վրացալեզու ուսուցիչների շփումը միայն վրացերեն: Դիդակտիկ նյութերի և ցուցահանդեսների վրացերեն մակագրությունները, գործընկերության ծրագրերը,

ամառային ճամբարները, միջոցառումները, ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների նմանակումը:

Առանձնապես ուշադրություն կենտրոնացվեց նրա վրա, որ երկլեզու ուսուցման ժամանակ արդյունավետ է համագործակցային ուսանման ձևը, քանի որ սա է նպաստում բանավոր հաղորդակցության կարողության զարգացմանը: Այս ժամանակ մասնակիցներն ունեն ինքնահիրացման ավել հնարավորություն, բարձր է պատասխանատվությունը թիմի նկատմամբ, զարգանում են նրանց սոցիալական հմտությունները և կարողությունները, նրանց տրվում է կարծիքի և գիտելիքի փոխանակման հնարավորություն:

Վերջում վարժողները և վարժանքի մասնակիցները նշեցին, որ երկլեզու կրթությունը չի կարող իրականացվել առանց ուսուցման ակտիվ մեթոդների (երաշխավորվում է խաղեր օգտագործել), անհատին կողմնորոշված ուսուցման:

Natela Meliqidze

The teacher of Akhalkalaki language house

Supporting of the bilingual education in Javakheti region

ABSTRACT

Ministry of Education and Science of Georgia is implementing the most significant activities on minority education issues. In order to support of bilingual education were conducted workshops for Javakheti school principles in November and December, 2010 by Center for Civil Integration and Inter-ethnic Relation financial support of EU. The workshops were carried out by specially trained trainers and consultants. The Article presents the report of this trainings.